

ԵՐԵՎԱՆ, 2026

«Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ»

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտ

«ԳԼՈՒԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

**«Հայաստանի Հանրապետության փաստաբանների
պալատ»**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025թ.

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	3-5
Փաստաբանների պալատի խորհրդի կազմը	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	8
Չուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11



«ԳԼՈՒԳԻՏ» ՍՊԸ

ՀՀ, ք.Երևան 0070, Արշակունյաց պողոտա 192, 5; հեռ.՝ (374 95) 48 00 47;
auditglobaudit@mail.ru; www.globaudit.am

Անկախ Աուդիտորի Եզրակացություն

Ներկայացվում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին և ղեկավարությանը

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ»-ի այսուհետ (Պալատ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում՝ այդ հաշվետվությունները ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

- Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Պալատի ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՓՄԿ-ի ՖՀՄՄ):
- 2025թ. ՀՀ Արդարադատության նախարարություն ներկայացված ամսական հաշվետվությունները («Ծախսերի փոխհատուցման հաշվետվություն») բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացված՝ արժանահավատ են:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Պալատից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր

մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պարասխանարվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Պալատի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Պալատի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Պալատը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Պալատի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պարասխանարվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այդ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք՝

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Պալատի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել ոչ Պալատի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Պալատը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը, և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

19 մարտի 2026թ.

Դավիթ Հարությունյան FCCA

Կարինե Շահինյան FCCA

Տնօրեն

Առաջադրանքի պատասխանատու



A handwritten signature in blue ink, corresponding to the name "Առաջադրանքի պատասխանատու" (Responsible for the assignment).

Փաստաբանների պալատի խորհրդի կազմը

Սիմոն Բաբայան
խորհրդի նախագահ

Ռոման Ահարոնյան
խորհրդի անդամ

Թամարա Բաղդասարյան
խորհրդի անդամ

Էմին Բեգլարյան
խորհրդի անդամ

Պավել Գյուլումյան
խորհրդի անդամ

Ռուբեն Հակոբյան
խորհրդի անդամ

Արսեն Հարությունյան
խորհրդի անդամ

Վարազդատ Հարությունյան
խորհրդի անդամ

Յոլակ Մարգարյան
խորհրդի անդամ

Դավիթ Մելքոնյան
խորհրդի անդամ

Լիլիթ Ղազանյան
խորհրդի անդամ

Դավիթ Վաղիկյան
խորհրդի անդամ

Մարինե Ֆարմանյան
խորհրդի անդամ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	58,644	52,603
Ոչ նյութական ակտիվներ	5	3,957	5,797
		62,601	58,400
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	93,905	74,651
Դրամական միջոցներ և համարժեքներ	7	38,501	86,051
		132,406	160,702
Ընդամենը ակտիվներ		195,007	219,102
Ջուտ ակտիվներ և պարտավորություններ			
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ			
Կուտակված շահույթ/ զուտ ակտիվների հավելած	8	95,440	104,451
Ընդամենը զուտ ակտիվներ		95,440	104,451
<i>Ոչ Ընթացիկ պարտավորություններ</i>			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	19,336	24,456
Ֆինանսական պարտավորություն	10	1,206	1,206
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		20,542	25,662
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	37,803	57,423
Շահութահարկի գծով պարտավորություն		33	46
Եկամուտներին վերաբերող շնորհներ	9	2,354	27
Պահուստներ	12	38,835	31,494
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		79,025	88,990
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		195,007	219,102

Վավերացման ամսաթիվ 19.03.2025թ.

Սիմոն Բարսայան
Նախագահ



Բրիտինե Կարախանյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 32-րդ թվերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբեր 2025	31 դեկտեմբեր 2024
Հասույթ	13	180,119	168,035
Այլ եկամուտ	14	810,918	796,003
Ընդամենը եկամուտ		991,037	964,038
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր		(834,144)	(780,016)
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր		(15,555)	(15,284)
Գործողման և ներկայացուցչական ծախսեր		(23,576)	(11,978)
Հեռահաղորդակցության ծախսեր		(15,170)	(11,931)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(22,592)	(23,892)
Առդիտորական և խորհրդատվական		(1,275)	(1,245)
Վառելիքի և տրանսպորտային ծախսեր		(24,077)	(24,661)
Վարձակալական ծախսեր		(15,576)	(14,969)
Շնորհի հաշվին կատարված ծախսեր		(1,884)	(59,810)
Բանկային և ապահովագրական ծախսեր		(1,588)	(1,836)
Զփոխհատուցվող ծախս		(26,403)	(1,229)
Այլ ծախսեր	15	(21,719)	(14,393)
Գործառնական գործունեությունից վնաս		(12,522)	2,794
Ֆինանսական եկամուտ		1,157	1,381
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս	16	2,387	(2,470)
Տարվա վնաս մինչև հարկերը		(8,978)	1,705
Շահույթահարկի գծով ծախս	17	(33)	(46)
Տարվա արդյունքը հարկումից հետո		(9,011)	1,659
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		(9,011)	1,659

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված հավելույթ (վնաս)	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	102,791	102,791
Հաշվետու տարվա հավելված կամ վնաս	1,660	1,660
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	104,451	104,451
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	104,451	104,451
Հաշվետու տարվա հավելված կամ վնաս	(9,011)	(9,011)
2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	95,440	95,440

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից մուտքեր	849,397	918,040
Որպես նվիրատվություն ստացված դրամական միջոցներ	93,367	53,812
Այլ մուտքեր	-	225
Ընդամենը մուտքեր	942,764	972,077
Նյութերի, ապրանքների ձեռք բերման, ծառայությունների մատուցման գծով ելքեր	(134,343)	(100,420)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(619,771)	(616,035)
Վճարումներ բյուջե	(220,258)	(194,828)
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	(1,098)	(14,321)
Ընդամենը ելքեր	(975,470)	(925,604)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(32,706)	46,473
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	-	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	-	-
Ստացված տոկոսներ	1,157	1,381
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	1,157	1,381
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր	-	-
Ներդրված ավանդներից	-	-
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	(18,388)	(13,448)
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	(18,388)	(13,448)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(17,231)	(12,067)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	-	-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	-	-
Բաժնեմասերի թողարկումից	-	-
Ստացված վարկերից և փոխառություններից	-	-
Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր	-	-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր	-	-
Ստացված վարկերից և փոխառություններից	-	-
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	-	-
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր	-	-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-	-
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	(49,937)	34,406
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	2,387	(2,470)
Դրամական միջոցների մնացորդը տարվա սկզբին	86,051	54,115
Դրամական միջոցների մնացորդը տարվա վերջին	38,501	86,051

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 32 -րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական ծանոթագրություններ

հաշվետվություններին

Կից

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի»
2025թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (այսուհետ՝ Պալատ) համարվում է Փաստաբանության մասին օրենքի հիման վրա ստեղծված փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ անտրային կազմակերպություն: Պալատը գրանցվել է ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 27.10.2025թ.-ին, գրանցման համարը՝ 211.174.03619, վկայական 03Ա 070122: Պալատի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Զաքյան փողոց, շենք 7-2:

Պալատի գործունեության առարկան և նպատակը՝

- պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում

- Գիտամանկավարժական կադրերի պատրաստում, վերապատրաստում և մասնագիտական որակավորման բարձրացում:

- Կազմակերպել փաստաբանների արտոնագրման գործընթացը

- կազմակերպել փաստաբանի ունկնդիրների մասնագիտական ուսուցումը և փաստաբանների վերապատրաստումը

- վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից Օրենքի, սույն կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման նկատմամբ

- միջոցներ ձեռնարկել փաստաբանության հեղինակության բարձրացման ուղղությամբ և այլն

Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը Փաստաբանների պալատի բարձրագույն մարմինն է:

Փաստաբանների պալատն իր գործունեությունն իրականացնում է իր մարմինների միջոցով, որոնք են

- Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը

- Փաստաբանների պալատի խորհուրդը
- Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը
- Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը

2025թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գործում է 3,010 փաստաբան:

Փաստաբան կանայք կազմում են ընդհանուր փաստաբանների 44 տոկոսը:

Միջազգային փաստաթղթերով և օրենքներով փաստաբանների համար սահմանված են երաշխիքներ, որոնց օգնությամբ փաստաբանները հնարավորություն ունեն անվախորեն պաշտպանել իրենց վստահորդների իրավունքները:

Պալատի աշխատակիցների թվաքանակը 31.12.2025թ.-ին կազմել է 151 մարդ (31.12.2024թ.-ին 155 մարդ):

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՓՄԿ-ի ՖՀՄՍ) պահանջների համաձայն: Ներկայումս ՓՄԿ-ի ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացման հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար: Եթե ՓՄԿ-ի ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՓՄԿ-ի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՀՄՍԽ>> «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքերի»):

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Պալատի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույն կերպով է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Պալատի գործարքների տնտեսական էությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթով ներկայացված տեղեկատվությունն առավել օգտակար է Պալատի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է հազար միավորի ճշտությամբ:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՓՄԿ-ի ՖՀՄՍ-ի համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Պալատի ղեկավարությունը կատարի կարևոր գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

2.5 Նախորդ տարիների սխալների ուղղում

Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվությունը, ներկայացվում են այնպես, իբր էական սխալներն ուղղվել են այն ժամանակաշրջանում, որում դրանք կատարվել են: Հետևաբար, ներկայացված յուրաքանչյուր ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը ներառվում է այդ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մեջ: Ներկայացված ժամանակաշրջաններից ամենավաղ ժամանակաշրջանի կուտակված արդյունքների սկզբնական մնացորդը կարգավորվում է ճշգրտումների այն գումարով, որը վերաբերում է այն ժամանակաշրջաններին, որոնք նախորդում են վերջին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների համադրելի տեղեկատվության մեջ ներգրավված ժամանակաշրջաններին: Նախորդող ժամանակաշրջանների վերաբերյալ ներկայացված որևէ այլ տեղեկատվություն նույնպես վերաներկայացվում է:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Պալատի համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ('ՀՀ ԿԲ') կողմից հրապարակված՝ արտարժույթային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ

արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Եվրո	449.01	413.89
ԱՄՆ դոլար	381.36	396.56
Բեժ Բրիտանական ֆունտ	515.6	499.27
Ռուսական ռուբլի	4.8711	3.71

Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես շահույթ կամ վնաս:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ Պալատի դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են, որոնք՝

ա) առկա են ապրանքների կամ ծառայությունների արտադրության (մատուցման) կամ մատակարարման, այլ կողմերին վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու համար, և

բ) ակնկալվում է օգտագործել ավելի քան մեկ ժամանակաշրջանի ընթացքում:

Կազմակերպությունը պետք է ճանաչի հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն, և

բ) միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Չափումը ճանաչման պահին

Կազմակերպությունը հիմնական միջոցի միավորը սկզբնական ճանաչման պահին պետք է չափի իր սկզբնական արժեքով, որն ընդգրկում է.

ա) գնման գինը, ներառյալ իրավաբանական և բրոքերային ծառայությունների դիմաց վճարները, ներկրման տուրքերը և գնման չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները;

բ) ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Սա կարող է ներառել տեղանքի նախապատրաստման ծախսումները, տրանսպորտային, բեռնման և բեռնաթափման սկզբնական ծախսումները, տեղակայման և հավաքման, ինչպես նաև ֆունկցիոնալության տեստավորման ծախսումները;

միավորի ապատեղակայման և քանդման, ինչպես նաև իր զբաղեցրած տեղանքի վերականգնման սկզբնական գնահատված ծախսումները, որոնց գծով կազմակերպության պարտականությունը առաջանում է կամ միավորի ձեռքբերման ժամանակ, կամ միավորները որոշակի ժամանակաշրջանում օգտագործման հետևանքով, որի նպատակը տարբեր է, քան այդ ժամանակաշրջանի ընթացքում պաշարների արտադրությունը:

Հետևյալ ծախսումները հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքում չներառվող ծախսումներ են, և կազմակերպությունը դրանք պետք է ճանաչի որպես ծախս, երբ դրանք կատարվում են՝

ա) նոր արտադրամաս բացելու հետ կապված ծախսումները;

բ) նոր արտադրատեսակ կամ ծառայություն ներդնելու հետ կապված ծախսումները (ներառյալ գովազդի և առաջխաղացման գծով ծախսումները);

գ) նոր վայրում կամ հաճախորդների նոր խմբի հետ գործունեություն իրականացնելու ծախսումները (ներառյալ աշխատակիցների ուսուցման գծով ծախսումները);

դ) վարչական և այլ ընդհանուր վերադիր ծախսումները;

ե) փոխառության ծախսումները:

Հիմնական միջոցի միավորի կառուցման կամ մշակման ընթացքում հարակից գործառնություններից ստացված եկամուտը և դրա հետ կապված ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե այդ գործառնությունները անհրաժեշտ չեն միավորը նախանշված վայր և աշխատանքային վիճակի բերելու համար:

Չափումը սկզբնական ճանաչումից հետո

Վերագնահատման մոդել

Կազմակերպությունը հիմնական միջոցի միավորը, որի իրական արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել, պետք է չափի վերագնահատված գումարով, որն իրենից ներկայացնում է դրա իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Վերագնահատումները պետք է կատարվեն բավարար պարբերականությամբ,

որպեսզի հաշվեկշռային արժեքը էականորեն չտարբերվի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իրական արժեքից: Եթե հիմնական միջոցի միավորը վերագնահատվում է, հիմնական միջոցի ամբողջ դասը, որին պատկանում է այդ ակտիվը, պետք է վերագնահատվի:

Եթե ակտիվի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվի սեփական կապիտալի վերագնահատումից արժեքի աճի հոդվածում: Այնուամենայնիվ, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվների նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում՝ այն չափով, որով նախապես նվազումը ճանաչվել էր շահույթում կամ վնասում:

Եթե ակտիվի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, նվազումը պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում այն գումարի չափով, որը չի գերազանցում այդ ակտիվների գծով վերագնահատումից արժեքի աճի առկա կրեդիտային մնացորդը: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված նվազումը պակասեցնում է սեփական կապիտալի վերագնահատումից արժեքի աճի հոդվածում կուտակված գումարը:

Մաշվածություն

Կազմակերպությունը ակտիվի մաշվող գումարը պետք է պարբերական հիմունքով բաշխի դրա օգտակար ծառայության ընթացքում:

Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարեցվում է, երբ ակտիվն ապաճանաչվում է: Մաշվածության հաշվարկը չի դադարեցում այն դեպքում, երբ ակտիվը գտնվում է պարապորդի մեջ կամ հանվում է ակտիվ օգտագործումից, բացառությամբ եթե ակտիվը ամբողջությամբ մաշեցվել է: Այնուամենայնիվ, ակտիվի օգտագործման վրա հիմնված մեթոդների համաձայն՝ մաշվածության գումարը կարող է լինել զրո, քանի դեռ չկա արտադրություն:

Պալատը ընտրել է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հիմնական միջոցների մաշվածության ժամկետներն ըստ դասերի հետևյալն են.

Շենքեր, շինություններ	10 տարի,
Մեքենաներ, սարքավորումներ	1-10 տարի,
Տրանսպորտային միջոցներ	5-10 տարի,
Արտադրական և տնտեսական գույք	1-3 տարի,
Այլ հիմնական միջոցներ	1-10 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվը ֆիզիկական սուբստանցիայից զուրկ որոշելի ոչ դրամային ակտիվ է: Այդպիսի ակտիվը որոշելի է, երբ այն՝

ա) առանձնացվելի է, այսինքն՝ եթե կարող է առանձնացվել կամ բաժանվել կազմակերպությունից և վաճառվել, փոխանցվել, տրամադրվել լիցենզիայով, տրվել վարձակալությամբ կամ փոխանակվել՝ կա՞մ անհատապես, կա՞մ հարակից պայմանագրի, ակտիվի կամ պարտավորության հետ միասին, կամ

բ) առաջանում է պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքներից՝ անկախ նրանից, թե արդյոք այդ իրավունքները փոխանցելի են կամ առանձնացվելի են կազմակերպությունից, կամ այլ իրավունքներից ու պարտականություններից:

Ոչ նյութական ակտիվները չեն ներառում՝

ա) ֆինանսական ակտիվները, կամ

բ) օգտակար հանաճոների արդյունահանման և օգտագործման իրավունքները և օգտակար հանաճոների պաշարները, ինչպիսիք են՝ նավթը, բնական գազը և համանման չվերականգնվող այլ ռեսուրսներ:

Կազմակերպությունը պետք է ճանաչի ոչ նյութական ակտիվը որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, եթե հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն, ակտիվի ինքնարժեքը կամ արժեքը կարող է արժանահավատորեն չափվել և այն կազմակերպության ներսում կատարած ծախքերի արդյունք չէ:

Կազմակերպությունը ոչ նյութական ակտիվները պետք է չափի սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Բոլոր ոչ նյութական ակտիվները պետք է դիտարկվեն որպես սահմանափակ օգտակար ծառայություն ունեցող: Պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքներից բխող ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը չպետք է գերազանցի պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքների ժամկետը, սակայն կարող է լինել ավելի կարճ՝ կախված այն ժամկետից, որի ընթացքում կազմակերպությունն ակնկալում է օգտագործել ակտիվը:

Եթե ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը չի կարող արժանահավատորեն գնահատվել, օգտակար ծառայությունը պետք է որոշվի հիմնվելով ղեկավարության լավագույն գնահատականի վրա, սակայն չպետք է գերազանցի տասը տարին:

3.4 Դրամական միջոցներ և դրա համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները, բանկի հաշվարկային հաշվում ունեցած միջոցները, ինչպես նաև երեք ամիս և

պակաս ժամկետայնությանը ընթացիկ ավանդներն ու այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումները:

3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է, հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռք բերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսումները: Պաշարների ինքնարժեքը որոշվում է՝ ԱՄԱԵ (FIFO) բանաձևով: Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ ծրագրերի համար նախատեսված ապրանքների միավորնի ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով: Արտադրական նորմատիվները հաստատվում են տնօրինության կողմից և ենթակա են պարբերական վերանայման:

3.6 Աշխատակիցների հատուցում

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ հատուցելի արձակուրդները և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում խմբին մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է.

Ա. որպես պարտավորություն արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջված գումարը, Պալատի ղեկավարությունն այդ գումարը ճանաչում է որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի
Բ. որպես ծախս, եթե այն չի ներառում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Կազմակերպության ղեկավարությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած կամ հանած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

3.8 Պահուստներ, պայմանական ակտիվներ, պարտավորություններ

Պահուստները ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններում ճանաչվում է, երբ Կազմակերպության ղեկավարությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, հավանական է, որ պարտականությունները մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք և պարտականությունների գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպանջվեն այդ պարտականությունները մարելու համար:

Ջեղձման դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել է:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, բայց բացահայտվում են, երբ տնտեսական օգուտների մուտքը հավանական է համարվում:

Պայմանական պարտավորությունները ճանաչվում են համախմբած ֆինանսական հաշվետվություններում այն դեպքում, երբ հավանական է պարտավորությունը լուծելու համար տնտեսական օգուտների արտահոսք և այդ արտահոսքը կարող է խելամտորեն գնահատվել: Դրանք բացահայտվում են այնքան ժամանակ, մինչև տնտեսական օգուտները մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է:

3.9 Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշվող չեն ակտիվ շուկայում: Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվելուց հետո հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Պալատը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական

դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

3.10 Արժեզրկում

Արժեզրկումից կորուստը առաջանում է, երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող գումարը: Ակտիվի փոխհատուցվող գումարը դրա իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները և օգտագործման արժեքից առավելագույնն է:

Իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումները, ակտիվի վաճառքից ստացվող գումարն է՝ իրազեկ և պատրաստական կողմերի միջև «անկախ կողմերի միջև գործարքում»՝ հանած օտարման ծախսումները: Օգտագործման արժեքը ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքն է, որն ակնկալվում է ստանալ ակտիվից:

Կազմակերպության ղեկավարությունն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է գնահատի՝ առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա Կազմակերպության ղեկավարությունը պետք է գնահատի ակտիվի փոխհատուցվող գումարը:

Կազմակերպության ղեկավարությունն արժեզրկումից կորուստը պետք է անմիջապես ճանաչի շահույթում կամ վնասում: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպության ղեկավարությունը գնահատում է, թե առկա է արդյոք ինքնարժեքով կամ ամորտիզացված արժեքով չափվող որևէ ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն: Եթե առկա է արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն, Կազմակերպության ղեկավարությունն ճանաչում է արժեզրկումից կորուստ՝ շահույթ կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված գնահատականը, սակայն ոչ ավելի, քան այն գումարը, որը կորոշվեր, եթե նախորդ տարիներին ակտիվի գծով ոչ մի արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Կազմակերպության ղեկավարությունն արժեզրկումից կորուստի հակադարձումը անմիջապես պետք է ճանաչի շահույթում կամ վնասում:

3.11 Շահութահարկ

Շահութահարկը ներառում է բոլոր ազգային և արտերկրյա հարկերը, որոնց հիմքում ընկած է հարկվող շահույթը: Շահութահարկը ներառում է նաև այնպիսի հարկեր, ինչպիսիք են

աղբյուրի մոտ պահվող (գանձվող) հարկերը, որոնք ենթակա են վճարման դուստր կազմակերպության կողմից՝ հաշվետու կազմակերպությանը կատարվող բաշխումների գծով: Շահութահարկի հաշվառումը պահանջում է, որ Կազմակերպության ղեկավարությունը ճանաչի ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գործարքների և այլ դեպքերի ընթացիկ և ապագա հարկային հետևանքները: Այդ ճանաչված հարկի գումարները բաղկացած են ընթացիկ հարկից և հետաձգված հարկից: Ընթացիկ հարկը ընթացիկ ժամանակաշրջանի կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթի (հարկային վնասի) գծով վճարման (փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարն է: Հետաձգված հարկը ապագա ժամանակաշրջաններում վճարման կամ փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարն է, որը սովորաբար կազմակերպության կողմից իր ակտիվներն ու պարտավորությունները ընթացիկ հաշվեկշռային արժեքով փոխհատուցելու կամ մարելու արդյունք է, և տվյալ պահին չօգտագործված հարկային վնասները և հարկային զեղչերը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հարկային հետևանք:

3.12 Շնորհներ

Շնորհները ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ՝ ներկայացվելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորություններ բաժնում, այն պահին, երբ կա բավարար հավաստիացում որ կազմակերպությունը ստանալու է շնորհը և բավարարելու է դրան կից պայմանները:

Այն շնորհները որոնց հիմնական պայմանն է գնել, կառուցել կամ այլ կերպ ձեռքբերել երկարաժամկետ ակտիվ (ակտիվներին վերաբերող շնորհներ), սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Այլ շնորհները (եկամուտներին վերաբերող շնորհներ) սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում սխտեմատիկ հիմունքով՝ համապատասխան այն ծախսումների ծախս ճանաչմանը, որոնց փոխհատուցման համար նախատեսված են:

Շնորհները, որոնք տրամադրվում են ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն, պետք է ճանաչվեն շահույթ/վնասում այն պահին, երբ դառնում են ստացման ենթակա:

3.13 Հասույթ

Պալատի հասույթն առաջանում է փաստաբանների կողմից վճարվող անդամավճարից, որակավորման քննությունների և մուտքի վճարից, օտարերկրյա փաստաբանների հավատագրումի վճարից:

Պալատի ղեկավարությունը հասույթը պետք է չափի ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքը հաշվի է

առնում Պալատի կողմից տրամադրվող ցանկացած առևտրային զեղչերի, ժամկետից շուտ վճարման զեղչերի և քանակային զիջումների գումարները:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, Պալատը պետք է ճանաչի գործարքից հասույթը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման: Գործարքի արդյունքը կարող է արժանահավատորեն գնահատվել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

4. Հիմնական միջոցներ

	Շենքեր, շինություններ, կառուցվածքներ	Մեքենաներ և սարքավորո ւմներ	Տրանսպոր տային միջոցներ	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	Մասնագիտական իրավական ակտեր և գրականություն, այլն	Կապիտալ ձախանք	Ընդամենը
Հազար դրամ							
Սկզբնական արժեք							
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	16,521	67,519	21,500	54,330	9,349	11,342	180,606
Ավելացում	-	5,150	-	9,348	-	-	14,498
Նվազեցումներ	-	-	-	(90)	-	-	(90)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	16,521	72,669	21,500	63,588	9,394	11,342	195,014
Ավելացում	-	4,149	11,900	3,609	-	-	19,658
Նվազեցումներ	-	-	-	-	-	-	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	16,521	76,818	33,400	67,197	9,394	11,342	214,672
Կուտակված մաշվածություն							
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	4,426	39,294	21,213	45,302	8,496	11,303	130,034
Տարվա ձախս	826	7,963	287	3,034	318	39	12,467
Նվազեցումներ	-	-	-	(90)	-	-	(90)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,252	47,257	21,500	48,246	8,814	11,342	142,411
Տարվա ձախս	826	8,448	71	4,082	190	-	13,617
Դուրսգրում	-	-	-	-	-	-	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,078	55,705	21,571	52,328	9,004	11,342	156,028
Հաշվեկշռային արժեք							
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,269	25,412	-	15,342	580	-	52,603
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,443	21,113	11,829	14,869	390	-	58,644

5. Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ <i>Սկզբնական արժեք</i>	Համակարգչ ծրագրեր րգչային	Տեսաֆիլմեր	Որակաորման քննությունների հարցաշար	Ընդամենը
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	8,362	1,804	4,416	14,583
Ավելացումներ այդ թվում	-	-	-	-
Վերագնահատումից	-	-	-	-
Նվազեցումներ	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	8,362	1,804	4,416	14,583
Ավելացումներ այդ թվում	800	-	-	800
Վերագնահատումից	-	-	-	-
Նվազեցումներ	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	9,162	1,804	4,416	15,383
<i>Կուրակված մաշվածություն</i>				
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	4,515	492	634	5,641
Տարվա մաշվածությունը այդ թվում	1,556	117	1,472	3,145
Նվազեցումներ	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	6,071	609	2,106	8,786
Տարվա մաշվածությունը այդ թվում	988	180	1,472	2,640
Նվազեցումներ	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	7,059	789	3,577	11,426
<i>Ձուտ հաշվեկշռային արժեք</i>				
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	2,292	1,195	2,310	5,797
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	2,103	1,015	839	3,957

6. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր; այդ թվում</i>	120,736	102,822
Տրված կանխավճարներ	3,152	1,351
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	115,646	99,393
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով, այդ թվում	75	2,077
Դեբիտորական պարտքեր աշխատավարձի վճարման գծով	1,800	-
Այլ դեբիտորական պարտքեր	63	-
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ	(26,831)	(28,170)
Ձուտ առևտրային դեբիտորական պարտքեր	93,905	74,651

7. Դրամական միջոցներ և համարժեքներ

Դրամական հոսքերի հաշվետվությունում ներկայացված դրամական միջոցները և դրա համարժեքները ներառում են հետևյալը.

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամարկը	330	736
Բանկային հաշիվներ	38,171	85,315
Ընդամենը	38,501	86,051

8. Զուտ ակտիվներ

Զուտ ակտիվները իրենից ներկայացնում է Պալատի ակտիվների և պարտավորությունների տարբերությունը, որն առաջացել է Պալատի կողմից կանոնադրական նպատակների իրականացման համար իրականացված ծախսումների հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական ծախսերի ճանաչումից: Ներկայումս ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ը չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար:

9. Շնորհներ

Հազար դրամ

Ակտիվներին վերաբերող շնորհներ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տարվա սկզբի մնացորդ	24,456	25,841
Շնորհի ստացում	841	4,645
Շնորհի ծախսում	(5,961)	(6,030)
Ընդամենը	19,336	24,456

Եկամուտներին վերաբերող շնորհներ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տարվա սկզբի մնացորդ	27	3,263
Շնորհի ստացում	86,039	53,637
Շնորհի ծախսում	(83,712)	(56,874)
Ընդամենը	2,354	27

10. Ֆինանսական այլ պարտավորություններ

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական այլ պարտավորություններ	1,206	1,206
Ընդամենը	1,206	1,206

Բացահայտում

Կառպա համակարգում Ջերմուկ Մայր Գործարան ՓԲԸ-ից ի պահ վերցրած գումարն է, որը ստեղծված է մինչև դատական գործի ավարտը:

11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր, այդ թվում	37,836	57,417
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	2,182	2,323
Ստացված կանխավճար	12,878	30,472
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով, այդ թվում	21,494	22,761
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	-	381
Կրեդիտորական պարտքեր այլ պարտավորությունների գծով	1,282	1,480

12. Պահուստներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Ավելացում	Հակադարձում	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Չօգտագործված արձակուրդի պահուստ	38,835	7,341	-	31,494
	38,835	7,341	-	31,494

13. Հասույթ

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Անդամավճար	158,138	147,978
Մուտքի վճար	18,320	14,341
Որակավորման քննությունների վճար այլ	500	1,250
Ընդամենը	180,119	168,035

14. Այլ եկամուտ

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
ՀՊԳ ծախսերի փոխհատուցում	713,536	729,528
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտ	90,893	60,358
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	5,961	5,851
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	528	265
Ընդամենը	810,918	796,002

15. Այլ ծախսեր

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Նյութածախս	10,948	8,274
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստի պահուստ	853	-
Անդամակցության վճար /օտարերկրյա/ Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	1,050	991
Ցրված օգնություն	7,341	3,509
Այլ ծախսեր	1,050	-
Այլ ծախսեր /այդ թվում օգնություններ/	477	1,619
Այլ ծախսեր /այդ թվում օգնություններ/	21,719	14,393

16. Արտաժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ /վնաս/

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամական միջոցների գծով	2,387	(2,470)
Ընդամենը	2,387	(2,470)

17. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	(33)	(46)
Հետաձգված հարկ	-	-
Հարկային ակտիվ	-	-
Ընդամենը	(33)	(46)

2025թ. Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը 18 տոկոս է (2024թ.՝ 18%):

18. Պայմանական պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա:

18.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Այս ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ի ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջանում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Համախմբած ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 3.2 և 4-հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ
- Ծանոթագրություն 3.3-ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետ
- Ծանոթագրություն 6-հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

19 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղությունները

Պալատն իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական, պարտքային, իրացվելիության ռիսկերի:

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի ու ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

19.1 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	115,646	99,393
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	38,501	86,051
Ընդամենը	154,147	185,444
	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,464	4,185
Ընդամենը	3,464	4,185

19.2 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Պալատը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես արտարժույթային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

բ) Արտարժույթային ռիսկ

Պալատը գործարկներ է իրականացնում արտարժույթով և հետևաբար, ենթարկվում է արտարժույթային փոխարժեքի տատանումների ազդեցությանը:

Արտարժույթային ռիսկի նկատմամբ Պալատի ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված վաճառքների, ձեռքբերումների և բանկային ավանդների հետ: Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին Պալատը չի ունեցել արտարժույթային ռիսկի ենթակա նշանակալի ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Պալատի նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերի և այլ անձանց տրված փոխառությունների գծով:

դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության Ռիսկը ենթադրում է, որ Պալատը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Պալատի ղեկավարության մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Պալատի համբավը վտանգելու:

Իրական արժեքի չափում

Կազմակերպությունը ակտիվի իրական արժեքը գնահատելիս պետք է կիրառի հետևյալ հիերարխիան՝

ա) իրական արժեքի լավագույն վկայությունը նույնանման ակտիվի (կամ համանման ակտիվի) գնանշված գինն է գործող շուկայում: Դա սովորաբար ընթացիկ առքի գինն է:

բ) երբ գնանշված գներ մատչելի չեն, նույնանման ակտիվի (կամ համանման ակտիվի) համար որպես իրական արժեքի վկայություն հանդես է գալիս վաճառքի պարտավորեցնող համաձայնագրի գինը կամ իրազեկ ու պատրաստական կողմերի միջև «անկախ կողմերի միջև գործարքում» վերջերս տեղի ունեցած գործարքի գինը: Սակայն, այս գինը կարող է չլինել իրական արժեքի լավ գնահատական, եթե տնտեսական պայմաններում նշանակալի փոփոխություններ են տեղի ունեցել կամ վաճառքի պարտավորեցնող համաձայնագրի կամ գործարքի և չափման ամսաթվի միջև նշանակալի ժամանակահատված է անցել: Եթե կազմակերպությունը կարող է ցուցադրել, որ վերջին գործարքի գինը իրական արժեքի լավ գնահատական չէ (օրինակ՝ քանի որ այն արտացոլում է մի գումար, որը կազմակերպությունը կստանար կամ կվճարեր պարտադրված գործարքի, ստիպողական լուծարման կամ պարտքի բռնագանձման նպատակով վերգրված ակտիվի վաճառքի դեպքում), ապա այդ գինը ճշգրտվում է:

գ) եթե ակտիվի համար շուկան գործող չէ, և նույնանման ակտիվի (կամ համանման ակտիվի) վաճառքի պարտավորեցնող համաձայնագիրը կամ վերջերս տեղի ունեցած գործարքը, որպես այդպիսին, իրական արժեքի լավ գնահատում չէ, ապա կազմակերպությունը գնահատում է իրական արժեքը՝ կիրառելով մեկ այլ գնահատման տեխնիկա: Գնահատման տեխնիկա կիրառելու նպատակն է գնահատել, թե չափման ամսաթվի դրությամբ որքան կլինեք գործարքի գինը «անկախ կողմերի միջև» սովորական գործարար նկատառումներով պայմանավորված փոխանակման ժամանակ:

20. Ապահովագրություն

20.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում:

Պալատը չունի ապահովագրության իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Պալատի գույքի կամ գործառնությունների պատահարներից

հասցված վնասի: Քանի դեռ Պալատը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Պալատի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

2026թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է պարտադիր բժշկական ապահովագրության համակարգը: Համաձայն օրենսդրական կարգավորումների՝ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է կատարել ամսական ապահովագրավճար, որի չափը կախված է աշխատավարձի չափից. մինչև 500,000 դրամ աշխատավարձի դեպքում՝ 4,800 դրամ, իսկ 500,000 դրամից բարձր աշխատավարձի դեպքում՝ 10,800 դրամ: Վճարները հավաքագրվում և տնօրինվում են Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի կողմից: Սոցիալապես անապահով խմբերը, մինչև 18 տարեկան անձինք և 65 տարեկանից բարձր քաղաքացիները ապահովագրվում են պետական բյուջեի հաշվին: Ապահովագրության փաթեթը ներառում է հիմնական ամբուլատոր և ստացիոնար բուժօգնություն, կանխարգելիչ ծառայություններ, ինչպես նաև որոշ բարձրարժեք բժշկական միջամտություններ՝ համավճարով:

22 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

23 Իրավական հարցեր

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Պալատի մասնակցությամբ առկա են դատական գործեր, որոնք գտնվում են ընթացքի մեջ: Առկա դատական գործերը էական ազդեցություն չունեն հաշվետու ժանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների վրա:

24 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ, սոցիալական ապահովության վճարները	60,818	56,946
	60,818	56,946

25 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքերի բացահայտումներ

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի չեն ունեցել այնպիսի դեպքեր, որոնք կարող էին հանգեցնել 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Պալատի ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկությունների ճշգրտման կամ լրացուցիչ բացահայտման: